# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոսի հ1 միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի **հայոց լեզու 13 դասաժամ, մաթեմատիկա 15 դասաժամ,ռուսաց լեզու 15 դասաժամ, տեխնոլոգիա 8 դասաժամ, ֆիզկուլտուրա 10 դասաժամ** թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

**1 )** դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,

**2 )** բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

**3 )** անձը հաստատող փաստաթուղթ,

**4 )** «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում):

**5 )** ինքնակենսագրություն (Ձև 5),

**6 )** այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

**7 )** Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

**8 )** հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

**9 )** որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

**Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի դեկտեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 15-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00,** բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թվականի դեկտեմբերի 19-ին՝ ժամը 14:00 - ին,** Գեղարքունիքի մարզի Երանոսի հ1 միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ,բնակավայր Երանոս,1-ին փողոց,շենք՝ 53:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 77 15 52 հեռախոսահամարով: